




Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրեայ):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՔ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻՆԵՐ

Հիւանդութեան աղբիւրներ.—Ներքին Տե-
ստիքները. Թիֆլիսի հայոց Բարեգործական ըն-
կերութիւնը. Նաւագնացութիւնը Սեւանայ լճի
մէջ. Նամակ Ղալաբից. Նամակ Արաբաբաբից.
Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԻ-
ԹԻՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին
լուրեր. — Հեռագրութիւն. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՆՆԵՐ:

ՀԻՄՆԱԳԻՐԻՆԵՐ ԱՂԲԻՐՆԵՐ

Ոչ մի պատերազմ այնպիսի սարսափելի
կոտորածներ չէ անում մարդկային ցեղի
մէջ, որքան թղթերի Հիւանդութիւնը:
Պատերազմը խլում է ազգաբնակչութեան
մի մասը միանգամից, իսկ թղթախտը կո-
տորում է անընդհատ, առանց դադար
առնելու: Վիճակագրական թվերը ցոյց
են տալիս, որ մահաբեր Հիւանդութիւն-
ների մէջ թղթախտը կազմում է ամենա-
վտանգաւորներից մէկը: Նա գործում է
կամայ-կամայ, բայց արմատից կրճոււ է
կազմակերպիչ ոյժը եւ գոյութիւնը եւ նը-
րան վայր գործում:

Վատ առողջապահական պայմանները,
անբաւարար սնունդը, նեղ, խոնավ եւ փակ-
ված բնակարանները, չափազանց ֆիզիկական
եւ մտաւոր աշխատանքը, հանգստութեան
պակասութիւնը նպաստում են այդ կոր-
ծանիչ Հիւանդութեան տարածման եւ
զարգացմանը, մինչդեռ երբ այդ անբա-
ւարար պայմանները վերացվում են, ոչ
միայն Հիւանդութիւնը կանգ է առնում եւ
չէ տարածվում, այլ եւ Հիւանդութեան հետեւ
մի նշանաւոր մասը նորից վերակազմու-
թիւն եւ առողջանում է:

Թղթախտի աղբիւրներից մէկն էլ կաթն
է: Եթէ կովերը, որոնց կաթը մենք գործ-
նք ածում եւ տալիս ենք մեր երեխանե-
րին, ունեն թղթերի տկարութիւն, այն
ժամանակ նրանց կաթը դառնում է թու-
րախտ տարածելու մի բուռ: Կաթի Հիւ-
միասին անցնում են սպառողների կազ-
մակերպիչ մէջ թղթախտի սաղմը, թու-
րախտի բացիները:

Կաթի այդ յատկութեան վրա արդէն
ուշագործութիւն են դարձել Արեւմտեան
երկրներում եւ Ամերիկայում: Եւ ահա մի
երկու տասնեակ տարի է, որ կատարվում
են գիտնական գիտողութիւններ՝ պարզե-
լու Հիւանդութեան վնասակարութեան
աստիճանը եւ մշակելու նրա կործանիչ
ազդեցութեան դէմ էական միջոցներ:

Մեզանում ոչինչ էլ արժանաւոր ուղ-
ղութեամբ: Մենք շարունակում ենք կե-
րակովել Հիւանդութեան վնասը մտա-
ծելու նրա աւելի ազդեցութեան մասին:
Մինչդեռ այժմ միջոց կայ ճանաչելու
թղթախտով Հիւանդ կովերին ոչ միայն այն
դէպքում, երբ նրանց կատարելապէս ընկ-
նում են այն Հիւանդութիւնից, այլ եւ երբ
միայն սկսվել է նրանց թղթերի թուա-
նալը: Բազմաթիւ փորձերից յետոյ Դանի-
այում գտան կովերի թղթերը քննելու եւ
ղանակը: Այդ նպատակով սրտկան եւ կո-
վերի մարմին մէջ տուրբուրներ կոչ-
ված շիջուկը: Եթէ սրտկանից յետոյ կո-
վերի տաքութիւնը բարձրացաւ, նշանա-
կում է նրանց Հիւանդ են թղթախտով,
իսկ եթէ մնաց անփոփոխ, ուրեմն կովերը
առողջ են: Այդ եղանակով կարելի է Հի-
ւանդ եւ կասկածելի կովերին հեռացնել եւ
կամայ-կամայ արմատախլ անել թղթախ-
տը նախնիներից:

Ժամանակ է, որ եւ մեզանում գործ-
նական միջոցներ ձեռք առնվեն թղթախ-
տի տարածման դէմ, որը մեր երկրում
նորիցէս ահազանք թուով գոհեր է տանում,
ինչպէս բոլոր անբարեկարգ կենսով ապ-
րող երկրներում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻԹԻՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵ-
ՐՈՒԹԻՒՆԸ

Գանգատվում են եւ այն էլ շատ արդարա-
ցի կերպով, որ Թիֆլիսի հայ հասարակութիւ-
նը չէ հետաքրքրվում իր բարեգործական ըն-
կերութեամբ, որի առջեւ կատարելու շատ
գործեր կան: Մենք ամենեւին դիտարկութիւն
չունենք արդարացնելու թիֆլիսցի հայերի
այդ տեսակ վերաբերմունքը, բայց կարծում
ենք, որ հասարակութիւնն էլ իրաւունք ունի
պահանջելու, որ ընկերութիւնը իր գոյութեան
մասին տեղեկութիւններ տալ: Շատ անգամ
մի որ եւ է բարեկամակալ հաստատութիւն չէ
կարողանում համակրութիւն եւ ժողովրդապա-
նութիւն գտնել լոկ այն պատճառով, որ նա
յայտնի չէ հասարակութեան: Եւ որպէս զի
թիֆլիսցիները իրանց անտարբերութիւնը
չարդարացնեն մեր յիշած այս հանգամանքով,
մենք պարտք ենք համարում մի քանի տեղե-
կութիւններ բերել թիֆլիսի հայոց Բարեգոր-
ծական ընկերութեան անցեալ տարվայ գոր-
ծունեութիւնից: Այդ տեղեկութիւնները կար-
դացվեցին ապրիլի 29-ին կայացած ընդհանուր
ժողովում, որին, սակայն, մասնակցում էին
շատ քիչ անդամներ:

1900 թ. ընկերութիւնը ունեցել է 155 ան-
դամ: Տարեկան մուտք եղել է 4780 ռ. 48 կ.,
իսկ ծախք նոյնքան: Տարվայ ընթացքում ըն-
կերութիւնը օգնել է կարօտեալներին հետե-
ւեալ կերպով. 83 մարդ ստացել են ամսական
թոշակ ընտանեկան վարձելու համար: Նոյն ըն-
կերութիւնը համար միասնապէս օժանդակութիւն
ստացելու օտարները: Կարողացել են օգնել
համար ստացել են նպաստ 67 մարդ: Հա-
ղուտ ստացել են 60 մարդ, կոչիկ 29: Եւս-
նազին ճաշարանի տոմսակներ՝ ձրի ճաշ ստա-
նալու համար—57 մարդ: 24 հիւանդներ ստացել
են ընկերութիւնից նպաստ տանը կամ հիւան-
դանոցում բժշկվելու համար: Թաղման ծախք
եղել է 4 անձի համար: 53 խնդր մերժված է:
1900 թ. հիւանդութիւնը ստացել է եղբւ-
րորդներին նաւթարդիւնաբերական ընկե-
րութիւնից 1637 ռուբլի նպաստ: Այդ գումար-
ից 137 ռ. բաժանել է աղքատներին, իսկ
1500 ռ. մնում է անձեռնմխելի՝ բացվելով
պատասխան տան սկզբնական ծախսերի համար:
1900 թ. ապրիլի 14 եւ 30-ին կայացած ընդհա-
նուր ժողովներում որոշված է բանալ ընկե-
րութեան միջոցներով աշխատանքի տուն (ДОМЪ
ТРУДОМІОІА) այնպիսի անձանց համար, որոնք
ընդունակ լինելով աշխատելու՝ հնարաւորու-
թիւն չունեն գործ գտնել:

Աշխատանքի տունը պէտք է լինի բազմա-
ցած երեք բաժանմունքից—տղամարդկանց,
կանանց եւ երեխաների համար: Բացի այդ
հիմնարկութիւնից ընկերութիւնը որոշել է
Յովհաննէս Խոզազեանի թողած գումարի եւ
անարժ կապերի արդիւնքով բանալ որբանոց
չբաւոր ծնողների եւ որբ աղքատների համար:
Այդ երկու հիմնարկութիւնների բանալու հա-
մար Բարեգործական ընկերութեան վարչու-
թիւնը դիմել է Թիֆլիսի պ. նահանգապետին
անցեալ 1900 թ. յունիսի 17-ին, բայց մինչեւ
օրս պատասխան չէ ստացել:

Ընկերութիւնը ունի անձեռնմխելի գումար
41,997 ռուբլի 35 կոպեկ: հանդուցեալ Յով-
հաննէս Խոզազեանի կառկած ժառանգութեան
արժեքը առ մէկն յունիսի 1901 թ. գնա-
նատված է 164,757 ռ. 82 կ.: Հանգուցեալի
ցանկութեան համաձայն այդ ժառանգութեան
ստացած տարեկան արդիւնքը պէտք է միայն
մայր գումարին, մինչեւ որ կը բացվի հա-
նդուցեալի անունով որ եւ ինչ հիմնարկու-
թիւն, որը պէտք է պահի կտակած գոյքի
արդիւնքով:

Այս տեղեկութիւնները բաւական են, կար-
ծում ենք, ցոյց տալու մեր անտարբեր հասա-
րակութեան, թէ ինչ պարտաւորութիւններ
ունի նա: Անկասկած, Թիֆլիսի հայ հասարա-
կութիւնը իր մէջ ունի աւելի շատ կարօտեալ-

ներ եւ աղքատներ, քան այն քանակութիւնը,
որ դիմել է ընկերութեան եւ նպաստներ է
ստացել: Անկասկած, վարչութեան ծրագրած
երկու համակրելի հիմնարկութիւնները—որբա-
նոցը եւ աշխատանքի տունը մեր քաղաքի աղ-
քատ ազգաբնակչութեան համար կը լինեն իս-
կական բարեարարութիւններ: Անկող գործ չա-
կայ, պակասում են միայն աշակերտներ, հա-
մակրողներ: Թիֆլիսի հայ ազգաբնակչութիւնը,
որ բաղկացած է աւելի քան 50 հազար հոգուց,
տալիս է Բարեգործական ընկերութեան ընդ-
ամենը 155 անդամ: Այս է նրա գիտակցու-
թեան եւ պարտաճանաչութեան ողորմելի
չափը: Ամօթալի երեւոյթ...

ՀԱՄԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ ՍԵՒԱՆԻ ԾՈՎԻ ՎՐԱ

Այս վերնադիր տակ մի յօդուածում մենք
«Մշակ» 1899 թ. № 169-ում հաղորդեցինք,
որ շուտով չորհրդաւ լողալու է Սեւանի ծո-
վակի վրա, որ ամենքիս փափաքն է: Ծովակը
չըջապատող ազգաբնակչութիւնը, մասնաւոր
Նոր-Բայազետի հասարակութիւնը, որ բնակե-
ւե ապրանքներ ունի արտադրանքներ եւ ներ-
մուծելու, անչափ ուրախ էր այդ առիթով:
Սակայն ժամանակն անցնում էր եւ տեղական
ժողովուրդը ոչ մի հաստատ տեղեկութիւն չու-
նէր չորհրդին հիմնվելու մասին: Բայց ահա
այս տարվայ «Մշակ» № 13-ի առաջնորդող
նորից աւետեց չորհրդաւ վերջնականապէս
հաստատվելու մասին, որին տեղական ազգա-
բնակչութիւնը սրտատրոփ սպասում է:

Երկրորդ անգամ վերադառնալու այդ խնդրին
մեզ աւելի առիթ տուցին հանգամանքներ,
այնպիսի յօդուածում տանջվել, իսկ բնու-
նէր չորհրդին հիմնվելու մասին: Բայց ահա
այս տարվայ «Մշակ» № 13-ի առաջնորդող
նորից աւետեց չորհրդաւ վերջնականապէս
հաստատվելու մասին, որին տեղական ազգա-
բնակչութիւնը սրտատրոփ սպասում է:

Կառկած չը կայ, որ չորհրդաւ հիմնարկու-
թեամբ շատ դժբաղդութիւններ կը վերանա-
նէջնակից եւ ծովակի հետ կապ ունեցող ազ-
գաբնակչութիւնը կընդարձակէ իր ձեռնարկու-
թիւնը աւելի մեծ չափերով: Աւելորդ է ասել,
որ այժմ տեղական արդիւնքները ընկերութիւնը
եւ զանազան արտադրանքներ եւ ներմուծելու ապ-
րանքներ աւելի շատ են, քան թէ առաջ:
Արտադրանքներ են եւ ժամանակի ընթացքում
կարտադրանքներ գարի, ցորեն, կտաւատ, ձէթ,
ձու, ձուկ, ճրագու, իւղ, պանիր, ածուխ եւ
այլ մանր-մունք տեղական բերքեր: Ներմուծ-
վում են աղ, շաքար, ալիւր, երկաթ, նաւթ,
տախտակ, ձօթ, մանրուք եւ այլ ապրանքներ,
որոնց տեղափոխել այժման մակոյակաւոր նա-
ւակներով շատերը խոյս են տալիս, քանի որ
այդ նաւակները անապահով են ամեն կողմից
եւ ամեն րօպէ կործանման վտանգին ենթարկ-
վելու առաջն: Եւ կանգնած: Միւս կողմից կան
անապահով քանակութեամբ հաղաթափներ, ու-
րոնք գաւառի զանազան կէտերից եւ չըջան-
ներից կրում են Նոր-Բայազետ եւ այլ տեղեր:
Երկու եղանակով փչանալու վտանգից:
Նոյն իսկ շատ ճանապարհորդներ, որոնք կա-
րեւոր գործեր ունեն այդ ծովակի շուրջը գտն-
վող գիւղերում, չեն ցանկանում ճանապար-
հորդել նաւակներով, այլ նրանք օրերով եւ
չաբաթներով սպասում են, որ մի սալ կամ
մի ձի ճարեն, որպէս զի ծովակի ափերով, չո-
րային երկար ճանապարհներով անցնեն, չըջա-
նակելով եւ կարելով անապահով տարածութիւն-

ներ օրերի ընթացքում, որ չորհրդաւ մի ժա-
մոււ միայն կարելի էր անցնել եւ գործը կար-
տարելով իսկոյն տուն վերադառնալ: Այն ինչ
այժմ թէ ճանապարհորդը եւ թէ նրանց բեռ-
ները այնքան պէտք է սպասեն, որ կամ նա-
ւատները քէֆը ուզէ նրանց տանելու եւ
կամ թէ իրանք՝ նաւատները երկար սպասե-
լով ալիքների եւ փոթորիկների դադարմանը՝
ճանապարհվեն ծովի վրայով, որ անքան եր-
կուղալի է...

Շորհրդաւ հիմնարկութեամբ եղբւ. Ծովա-
նաւակները անշուշտ մեծ բարիք արած կը լինեն
տեղական ազգաբնակչութեան թէ նրաւապէս
եւ թէ բարոյապէս:

Գ. Սինանեան

ՆԱՄԱԿ ՂԱԼԱԲԻՑ

Մայիսի 1-ին

Երեւի շատ շատերը մեզ, զղարցիներս,
պիտի նախանձնեն, որ ներկայ պարագաներում,
երբ երէցիփոխական աշխարհում այնքան սովո-
րական երեւոյթների շարքն են անցել անապահ-
զութեան փառանքի, զանազան զեղծում-
ները, մենք բաղդ ենք ունենում մեր երէցիփո-
խներից ստանալ բաւական կարգին հաշիւներ,
այն էլ երէցիփոխների իրանց ստիպմամբ, այ-
լապէս ժողովրդի մաքով էլ գուցէ չանցնէր
այդ, որովհետեւ նա անտարբեր է առհասարակ
դէպի իր հասարակական գործերը:

Այդպիսի մի հաշիւաւորութիւն նշանակված էր
ապրիլի 21-ին, եւ պիտի տային տեղիս 4
եկեղեցիների հաշիւները: Երկար ու ձիւ ծա-
նուցումներից, յայտարարութիւններից յետոյ,
տեղի ունեցան «նեղիս» յաղորդարանի դահլի-
ճում Հաշիւներից, որոնք վաղուց ստուգված
էին հաշիւաւոր յանձնաժողովի կողմից (թէ եւ ոչ
ոչ չը պահանջեց վերջիններիս վաւերացումը):
Կարգացվեցին միայն ընդհանուր գումարները,
որից երեւաց, որ մեր եկեղեցիները առ 1
յունիսի 1901 թ.—արժէթղթերով եւ կան-
խիկ դրամով ունեն—Ս. Աստուածածամ եկե-
ղեցին՝ 97,906 ռ. 69 կոպ., ա. Լուսաւորի ե-
կեղեցին՝ 15,298 ռ. 59 կոպ., ա. Գեորգ ուխ-
տատեղի եկեղեցին՝ 13,373 ռ. եւ գերեզմանա-
տան եկեղեցին՝ մօտ 9,000 ռ.: Կանխիկ դրամ-
ներ առհասարակ քիչ են պահվում երէցիփո-
խի մօտ, այն էլ մոտի կամ վերանորոգութիւն-
ների համար:

Հաշիւաւորութիւնից յետոյ ժողովականները
յոտնկայս շնորհակալութիւն յայտնեցին երէց-
իփոխներին՝ նրանց անխաբար ծառայութեան
համար եւ վերնադիրին՝ նրանց, այն է՝ ա.
Աստուածածամ եկեղեցու համար՝ պ. Յ. Թա-
թեանցին եւ ուխտատեղի եկեղեցու համար
Ո. Գալանթարեանցին: Ընթացիկ եւ 3 հաշ-
ւաւորներ. վերջիններս, սակայն, շատ նազ ու
թողով. չը գիտենք, ճշմարիտ, երբ պէտք է
վերջ դրվի այդ առիթականութեան, որ նկատելի
է իւրաքանչիւր ընտրութեան ժամանակ: Ի
դէպ, 3 հաշիւաւոր, մեր կարծիքով, շատ քիչ
է, քանի որ ընտրողների մէջ մասնագէտ
հաշիւապահներ էլ չեն լինում: Կարելի էր եւ
այդ հանգամանքի վրա մեր առաջնորդի ուշա-
դրութիւնը:

Երեւի մեր ժողովրդի դէպի հասարակական
գործերը ունեցած անտարբերութեան շնորհիւ
էր, որ այդ երեկոյ առիթից օգտվելով զրկված
էին բաւական շատ հարցեր: Այդ հարցերի
թոււում էր նաեւ, ըստ երեւոյթին, մի շատ
հետաքրքիր խնդիր, որ պատկանում է այն մի
շարք բարեփոխութիւններին, որոնք սկիզբ
են առել մեր ներկայ առաջնորդի օրով:
Մեր թեմի մի քանի քաղաքներում, այն է՝
Աստուածածամ, Ղալաբում եւ Արմաւիրում, ուր
համեմատաբար շատ շատ է վաճառվում մօմ,
առաջնորդը կարգադրել է, որ այդ քաղաք-
ներից մօմաւաճառութեան արդիւնքով ու-
ղարկվեն իւրաքանչիւր տարի մի մի չքաւոր
աշակերտ բերել ապագայ ջանադարներ: Մեր
թեմական դպրոցները խոսք չը կայ, որ ժողո-
վականները ընդունեցին ամենայն համակրան-

որ նախնադատը կարգադրել է, որ այսուհետեւ ոչ ոք չը գիտէ իշխանութեանը վարչական կերպով խնդրելով կորած ապրանքները այս եւ այն գիւղից կամ գողից, այլ պէտք է գիւղացիք վարձեն պահպաններ թէ գիւղի, թէ դաշտերի եւ թէ սարերի համար: Այլ եւ խիստ նախատեսք մի քանիսն իրեն անանուն թըղթեր գրելու համար:

ԱՍՏԱՒԻՆ ԱՔԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառի Այստան գիւղում տաւարի ժանտախտ է երեւցել: Ասում են, թէ հիւանդութիւնը փոխվել է Ալեքսանդրապոլի գաւառի վարակված գիւղերից բերած տաւարներից: Ներկայումս այդ գիւղում գտնվում են թէ այստեղի գաւառական անասնաբույժը եւ թէ թիֆլիսի յատկապէս այդ նպատակով եկած մի ուրիշ անասնաբույժ: Հիւանդութիւնը երեւալուց մինչեւ հիմա, ընդամենը մի 5-6 օրվայ ընթացքում, սպանված են մօտ 60 գլուխ տաւար: Յոյս կայ, որ ձեռք առած միջոցների շնորհիւ հիւանդութիւնը չուտով վերջանայ:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Զայնաւորների մի որոշ խումբ առաջարկում է քողաքազիւր թեկնածու պ. Մարգարեանցին: Նա, իբրեւ փորձված եւ անշահխնդիր մարդ, արժանի է այդ պաշտօնին: Նրա բունած գիւղը եւ ուղղութիւնը պարզ կերպով յայտնվեց ձայնաւորների ընտրութիւնների ժամանակը:

ԲԱՐՎԱՆԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Արդէն վճռված է բանալ մեր կայարանում հեռագրատուն: Եղանակները անձրեւային են, արտերը շատ լաւ:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Շատ կանոնաւոր անձրեւներ են ընկել, շարունակ օդը մեղմ է եւ եղանակը դուրեկան: Տօրենք եւ ալիւրը բաւական առատ են մեր քաղաքում: Տեղական լաւ ալիւրի պուրը ծախվում է 80 կօպ. պուրը, ցորենը 70-75 կօ: Ձը նախելով տեղական ալիւրի ալյուրն է ժամութեան, քաղաքին դէպուտատները հացի գինը չեն իջեցնում, դարձեալ 3 կօպէկով է ծախվում թխած հացը:

ՍԵՒ-ԲԱՐ գիւղից մեզ գրում են. «Կայկածը խիսց եւ մի մարդ սպանեց: Եղանակները անձրեւային են: Եթէ որ եւ է պատահար չը լինի, առատ հունձ է խոտտանում տարին:

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են. «Մայիսի, 6-ին հայ դերասանները՝ պ.պ. Ստեփանեան, Զարիֆեան, Խաչիկ Ուտուշի եւ տ. Փառնանձեմ, սիրողների մասնակցութեամբ, տուրին Ասլան-Բալասը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐԱՎԱՍՏԱՆԻՑ

Թարիւղ, ապրիլի 26-ին

Սահակ եպիսկոպոս Այվատեան շուտով գնալու է Էջմիածին. Վեհափառ Կաթողիկոսի պատասխանին է սպասում Այվաճ նա վերջնականապէս հրաժարված է եւ գործերը յանձնել է գործակալ քահանային: Այվատեան եպիսկոպոսը, ինչպէս Թէհրանում, նոյնպէս եւ Ատրպատականում, մի շարք կենդանի փաստերով ցոյց է տուել, որ իր ժողովրդին նուիրված եւ եռանդուն հովիւ է: Գիւղի եւ գաւառի ցաւը եւ ուրախութիւնը նրա ցաւը եւ ուրախութիւնը: Երբ ինչու անհետաքրքրվում էր նրա ցաւով, կարիքով, եւ ամեն կերպ աշխատում էր դարմանել, հոգալ, այդ կը վկայէ ամեն մի գիւղացի, նոյն իսկ ամեն մի բարեխիղճ թաւրիզի, բացի այն մի քանի աղաներից, որոնք ամեն տեսակ զիջողութիւններ ձեռք առան նրա վարկը գնելու: Եւ ինչպէս: Անձնական ընդհարումների պատճառով, որովհետեւ Այվատեան եպիսկոպոսը չէր ձանաչում նրանց աղա լինելու եւ հակակրօնք էր ցոյց տալիս: Բայց գաւառը եւ գիւղը չի մոռանալ եպիսկոպոսին: Ինչպէս հաստատ լուծւում են, Այվատեան եպիսկոպոսը հրաւիրված է Թէհրան առաջնորդ, եւ դա շատ բնորոշ է. թէհրանցի հասկանալի է նրա առաւելութիւնները, որոնցից զուրկ են շատ հոգեւորականներ:

Ապրիլի 28-ին թագաժառանգը ձանապարհվեց ընտանիքով Թէհրան. թէ ինչու, որոշ բան չը կայ. Թեր եւ զէմ կարծիքներ են տիրում: Սրբազան Այվատեանը գնացել էր թագաժառանգի մօտ եւ այցելութեան, եւ ձանապարհ ձգելու, եւ մի եւ նոյն ժամանակ պաշտօնապէս յայտնելու, որ հրաժարված է եւ շուտով

ուղեւորվելու է Էջմիածին: Թագաժառանգը երկար խօսում է Այվատեան եպիսկոպոսի հետ եւ, ի միջի այլոց, ասում է. «Շատ անգամ ասել եմ, այժմ էլ կրկնում եմ, որ միշտ դու եւ բաւական եմ եղել ձեր գործունէութեանից եւ պաշտօնավարութեանից, եւ միշտ էլ յարգել եմ ձեզ. ահա տալիս եմ նուէր իմ լուսանկարը, որպէս փաստ իմ անկեղծ յարգանքի եւ որպէս դոկումենտ ձեր եռանդուն գործունէութեան այս երկտող ձօնը:

Այդ գրութեան մէջ չեղոված է, թէ սրբազանը եռանդուն եւ արիւնքան կերպով գործել, կառավարել է Ատրպատականը, արթուն հովիւ է եղել, եւ դրա համար էլ յայտնում է իր շնորհակալութիւնը եւ գոհունակութիւնը:

Ե. Ֆրանգեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Indépendance Belge» լրագրի թղթակիցը հաղորդում է Լոնդոնից. «Քաղաքական շրջաններում լուր է պտտում, թէ լորդ Սոյս-Բիւրի շատ կարճ միջոցից յետոյ կը թողնէ իր պաշտօնը: Այդ լուրը պտտվում էր վաղուց, բայց եւ այժմ ծանրակշիռ պատճառներ ունեւ կարծելու, որ այս անգամ այդ լուրը ճշմարիտ է: Սոյս-Բիւրի հեռանում է ասպարէզից նրա համար, որ նրա քաղաքական անողնութիւնը այլ եւս թոյլ չէ տալիս վարելու առաջին միջնորդի բազմահոգ պաշտօնը: Մայիսի 1-ին տեղի ունեցաւ միջնորդական խորհուրդ, որի ժամանակ քննվեց Սոյս-Բիւրի յայտնող ընտրելու հարցը:

Մայիսի 1-ին անգլիական համայնքների ժողովում քննվում էր Դիմազարի առաջարկութիւնը, որով համայնքների ժողովում արտասանված ձանդերը չը պէտք է տեսնէ 20 րօպէից աւելի: Բացառութիւն թողլ է տրվում միայն այժմեան եւ նախկին միջնորդների, օրինակների եւ օրոշումների հեղինակների համար: Այս առիթով տեղի ունեցած վիճարկումներին մասնակցեցին շատ ճառախօսներ, որոնց միջամասնութիւնը կարծիք յայտնեց առաջարկութեան դէմ: Կառավարութեան նախագահը արտաքին միջոցը նպատակին չի հասնի: 20 րօպէից աւելի խօսող պատգամաւորին կանգնեցնելու համար հարկաւոր կը լինի ժողովի միջամասնութեան միջամտութիւնը, իսկ սա հնչողութեամբ կարող է օրատուկից լայի միջոց դառնալ: Իրաւի ճառից յետոյ համայնքների ժողովը ձեռնամուկ եղաւ քուէարկութեան եւ մեծերը Դիմազարի առաջարկութիւնը 117 ձայների առաւելութեամբ ընդդէմ 83-ի:

«Paris Nouvelles» զարհուրելի մանրամասնութեանը է հաղորդում իտալական իշխանութիւնների վարձուքի մասին Սարդի-նիայում հարկերի ապուրկները հաւաքելու ժամանակ: Լանուէլի եւ Գվադալա գիւղերում հրապարակական աճուրդով իշխանութիւնները ծախեցին 541 տուն, որոնցից 85-ի իշխանութիւնը դեռ եւս աւարտված չէր: 221 ընտանիք հասցրած են վերին առաժնային աղքատութեան: «Եթէ իտալական իշխանութիւնները այսպէս կը շարունակեն վարվել, առում է «Paris Nouvelles»-ի թղթակիցը, «մանր սեփականութիւնը բոլորովին կոշտանալ կզուլրա»: Կառավարութիւնը, տեղական լրագրի-ների անվով, մրցում է վաշխառուների եւ աւազակների հետ եւ տանում է Սարդիան զէպի տնտեսական կատարելապէս անկում: Հոգաւորների գրութիւնը կզուլրա վրա բոլորովին անտանելի է դարձել: Նրանք ոչ դրամաւորութեան, ոչ կրեդիտ, եւ հարկեր վճարելու համար օտարված են դիմել վաշխառուներին:

Ֆրանսիական յետադիմականները, կամե-նալով խանգարել սենատին քննելու կրօնական միաբանութիւններին վերաբերեալ օրինագիծը, դիմեցին մի այնպիսի օրաման միջոցի, որ մեծ դժուարութիւններ պատճառեց կառավարութեանը: Մօտ ժամանակներում Պարիզ հասաւ յայտնի օրայիտ կոմս Դըլիւր Սալիս, որ 1899 թ.ին, նրա բացակայութեան ժամանակ, դատաւարված էր սենատի կողմից հանրապետութեան դէմ կազմած դատաւարութեանը մասնակցելու համար: Եւ դիմեց սենատին նախագահին մի նամակով, որի մէջ խնդրում է այդ գործը վերաքննութեան ենթարկել: Աւելորդ է ասել, որ կառավարութիւնը չէր ցանկանալ, որ սենատը որ եւ դատաւարական գործի համար կորցնէր այն ժամանակը, որ պէտք է նուիրված լինի կրօնական միաբանութիւններին վերաբերեալ օրինագծի քննութեանը: Բայց օրա հետ միասին կառավարութիւնը հեղա չի լինի մերժել եւ կոմս Դըլիւր Սալիս ինքիւրքը:

Մայիսի 3-ին անգլիական համայնքների ժողովը վերապէս սկսեց վաղուց սպասված վիճարկումները գործի վերակազմութեան ծրագրի մասին, որ մասին է զինուորական նոր միջնորդ Բրօքլի: Այդ ծրագրի

էական կէտերը հետեւեալներն են: Բրիտանական զորքի կազմը կաւեալցնվի 126 հազարով, այնպէս որ նա ընդամենը բաղկացած կը լինի 630 հազար մարդուց: Զօրքը կը բաժանվի վեց կորպուսների, որոնցից իւրաքանչիւրը կը ներկայացնէ մի անկախ ամբողջութիւն: Իր սեփական թնդանօթներով, իր առանձին զրդ-խաւոր շտաբով եւ պաշարողէին առանձին վարչութեամբ: Կորպուսներից երեքը մշտապէս պատրաստ կը լինեն ուղեւորվելու Միացեալ թագաւորութեան սահմաններից դուրս, երբ այդ հարկաւոր լինի: Բրօքլիի ծրագրերը, ինչպէս յայտնի է, հէջ սկզբից շատ քիչ համակրողներ գտաւ: Նոյն իսկ կառավարական կուսակցութեան պատկանող անդամների մէջ: Հասարակութիւնը սպասում էր, որ դիմադրական կուսակցութիւնը խիստ քննադատութեան կենթարկէ Բրօքլիի ծրագրի: Յարձակումը պէտք է սկսէր նախկին զինուորական միջնորդ կէմպէլ-Բաններման: Այս պատճառով համայնքների ժողովը նրաը անցեալ երկուշաբթի, երբ պէտք է ներկայացվէր Բրօքլիի ծրագիրը, բացվեց բազմաթիւ անդամների եւ կողմնակի հասարակութեան ներկայութեամբ, որոնց թւում էին եւ զանազան պետութիւնների դեսպանները: Սակայն հասարակութեանը հիասթափութիւնը եր սպասում էր: Վիճարկումները չափազանց անգոյն էին եւ անհետաքրքիր: Նոյն իսկ Բաններմանի ճառը անաջող եւ անհետաքրքրական էր:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

10 մայիս

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Մայիսի 9-ին Թագաւոր Կայսրը եւ Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Յեօգօրովնա Օդոտափառ Ներխանների հետ ձմեռային բեզիդնիցայից — Ճարսկո-Սելօից տեղափոխվեցին ընտանեկան համար ամբարանի բեզիդնիցան: Ալեքսանդրա — Նոր-Պետեր-հօփում:

Մայիսի 9-ին Գառնիւնում, ներկայութեամբ Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհի Մարիա Յեօգօրովնայի, Թագաժառանգի, Մեծ Իշխանութիւնի Մարիա Պաւլովնայի, Նիքոլաեւտա Յեօգօրովնայի, Օլգա Ալեքսանդրովնայի եւ Ելենա Վլադիմիրովնայի ու Մեծ Իշխանի Վլադիմիր Ալեքսանդրովիչի, Կիրիլ Վլադիմիրովիչի, Սերգի Ալեքսանդրովիչի եւ Պետր Նիկոլաեւիչի տեղի ունեցաւ Թագաւոր Կայսրի եւ Մարիա Յեօգօրովնայի լէյ-գվարդիան կիրաւորների գնդի եկեղեցական զօրահանդէս, տօնի առիթով:

ՄՕՍԿՎԱ: Մամուլի գործի ընկերութեան Մոսկվայի բաժանմունքը, մամուլի երկուհարկաւոր միջոցներ յօդակներ յաւերժացնելու համար, վճեց Ստրոգանովսկի դպրոցին կից հիմնել վիճակագրների դպրոցը:

ՎԻԼՆԱ: Վարձանվեց գնեւալ-նահանգապետ եւ չրջանի զօրքերի հրամանատար գեներալ-ադիւտանտ Տրօցկի ստամոքսային արիւնհոսութիւնի: Քիչ ժամանակ էր հիւանդ, մայիսի 9-ին վերկացաւ անկողնուց եւ յանկարծամահ եղաւ: Հանգուցեալի թաղման կարգը կը կատարվի մայիսի 11-ին, Ուրալի, իսկ յետոյ մարմինը կը փոխադրվի Չէրնիգովսկի նահանգը, իր կալուածքը:

ԽԱՐԿՈՎ: Տեղական գիւղական աղքատաւիւթեան ժողովը որոշեց յատկացնել 1500 ր. միասնապէս եւ 600 ր. տարբեր մանկական ապաստարան հիմնելու համար:

ԼՕԴԶ: Բրդէ ապրանքներ մշակող գործարաններում բարեօրոշմն սկսվեց. այստեղի շուկան կենդանաւում է. չէ՛ք գործարաններում կատարեալ լուծիւն է թագաւորում:

ԱՐԽԱՆԳԷԼԱՅ: Մայիսի 8-ին նահանգական դատարանում քննվում էր պոռնիկ Նիքոլայի սպանութեան գործը: Մեղադրվող երկու անձինք արդարացան: Երեք ամենահեռու դատարաններից ամառային պօստեր դեռ չեն ստացվել: Մալաբովի չողենաւ ազատեց Դվինայում խեղդող 11 անձանց:

ՇԱՆԳԱՅ: Հաղորդում են, որ Լի-Պունգ-Չանգին եւ Յինին ուղղած կայսերական հրովարտակը պահանջում է, որ կտրական կերպով եւ շուտով աւարտվեն խաղաղութեան վերաբերեալ բանակցութիւնները, որպէս զի պայտը կարողանայ վերադառնալ Պէկին:

ԽՐԻՍՏՈՒԱՆԻՒ: Հաղորդների ստացած տեղեկութիւնները համաձայն, Հէնրիկ Իւսէն վերջին ժամանակներս կտրուութիւն է բաշում: Նրա հիւանդութիւնը մի տեսակ կաթում է, որը աղցն լեղուի վրա, այնպէս որ հիւանդի լեղուն համարեալ բոլորովին կապվել է: Նա մեծ դժուարութեամբ է մանդալին դաւադանի օգնութեամբ: Խոսակցութիւնը անկապ է. նա հանգստութեան անհրաժեշտ կարիք

ունի, բայց ընդհանրապէս առողջանալու վրա է:

ՍԱՌԻՏԱՄՏՈՆ: Սօլեմեան ջրանցքում պէտք է տեղի ունենար փորձական նաւային մրցում: Յանկարծակի զօրեղ քամին պոկեց առաջատար «Շամբոկ II» նաւից, որի վրա գտնվում էր թագաւորը: Նաւը խորտակվեց. թագաւորը եւ նրա հետ գտնվող բոլոր անձինք հազիւ ազատվեցին: Մրցութեան մասնակցող բոլոր մնացած նաւերը եւ «Շամբոկ II» սաստիկ վնասվեցին:

ԲԵՐԼԻՆ: Վաղերիցէ հետադուր է Պէկինից. «Լիխտենշտայն Վոնց լուրը կերպով հարածել «Մեծ բուռնցքի» ոյժերը կտրաւային սահմանորոշ գծի վրա: Այժմ նրա գնեւալները ձեռք ձեռքի տուած են գործում Ֆրանսիական զօրքերի հետ Բալիւ գեներալի հրամանատարութեան տակ: Կապիտան Կնիքցէր 3-դ գնդի 3-դ եւ 8-դ բոտաներով վրա հասաւ եւ շարքեց «Մեծ-բուռնցքի» 400 մարդուց բաղկացած զօրաբաժինը Մանչէնի մօտ 22 կիլոմետր դէպի հիւսիս-արեւմուտք Պատիսֆոնից: 8-դ բոտայում մինչեւ այժմ հինգ վերաւորածներ կան:

ՎԻԵՆՆԱ: Մայիսի 9-ին արտաքին գործերին վերաբերեալ ուղեգրական պատգամաւորութիւններ յանձնաժողովի մէջ Գոլոմովի մի ճառ արտասանեց, որը սկսվում է գործերի բացատրութեամբ Զինաստանի մէջ: Աւստրո-Ունգարիայի համար, —ասեց նա, —առաջին վայրկեանից ոչինչ կաւած չէր մնում, որ նրա մասնակցութիւնը պետութիւնների միաբան գործողութիւններին մէջ պէտք է չըջափակվէր այն սահմաններով, որ թող էին տալիս նրա ունեցած չնչին շահերը Զինաստանում: Այդ սահմաններին մի փոքր ընդլայնումը կարող էր թոյլ տրվի միայն ի յարգանք այն պարտաւորութեան, որ պահանջում է միապետութեան զօրեղ գրութիւնը. պետութիւնների անհրաժեշտ եւ ճշգրտութեամբ առաջուց նկարագրված գործողութիւններին մասնակցելուց պէտք էր հրաժարվի, որովհետեւ միապետութիւնը պարտաւոր է խուսափել այն բոլորից, ինչ որ կարող էր նրան գցել հետեւանքներով հարուստ վտանգաւոր ձեռնարկութիւնների մէջ: Սկզբից եւ եթ արտաքին չէր այն միտքը, թէ պէտք է օգուտ քաղել այդ գործողութիւններից պաշտօնապէս գաղթականական քաղաքականութեան ձանապարհի վրա կանգնելու համար. դա կարող էր շատ հեշտութեամբ միապետութիւնը դժուար դրութեան մէջ գցել, որը կը սահմանափակէր նրա շարժման ազատութիւնը, այն ինչ նա իր զօրութիւնը պէտք է անձեռնմխելի պահպանէ այն դէպքի համար, երբ վտանգի ենթարկված կը լինեն նշանաւոր եւ բացառիկ շահերը: Հեռուտորը ապա բացատրեց խաղաղութեան բանակցութիւնների յայտնի հիմքերը եւ մասնաւորապէս, որ մինչեւ այդ բանակցութիւնները աւարտված չեն, անհրաժեշտ է չափաւորութիւն պահպանել: Ինչ վերաբերում է վարձատրութեան պահանջներին գոհացում տալուն, նա կախված է մեծ փոխադրութեան համար բաւարար ապահովութեան ընտրութիւնից: Շատ ցանկալի է, որ վճարումը միանուագ կատարվի եւ ոչ թէ տարեկան վճարներով, որպէս զի կարելի լինի շուտով վերջ տալ ամբողջ գործին: Աւստրո-Ունգարիայի պահանջած գումարը համապատասխանում է փաստական ծախսերին եւ վնասներին: Անցնելով ապա ամենամօտ եւրօպական շահերին, միջնորդը վկայում է, որ Կ. Պօլսի դեսպանների կոնֆլէքտիցայի միջնորդ դատարանի ձեռքով յոյն-թիւրքական առեւտրական եւ հիւպատոսական պայմանագրի հարցի բաւարար լուծումը պէտք է նշանաւոր կերպով ամրացնէ բարեկամական յարաբերութիւնները Թիւրքիայի եւ Յունաստանի միջեւ եւ կարող է այդ պատճառով դնահատվել որպէս հանգստացրեցի երեւոյթ: Աւստրո-Ունգարիայի արտաքին քաղաքականութեան ընդհանուր ուղղութեան մասին միջնորդը հաւատարմացնում է, որ նա ընդունում է դաշնակիցների հետ սերտ գործակցութիւն ուղիղ ձանապարհով, մի եւ նոյն ժամանակ բարի յարաբերութիւններ պահպանելով մնացած պետութիւնների հետ, մասնաւորապէս հարեւան Ռուսաստանի հետ: «Խաղաղութեան ընդհանուր շահերի այդ տարիներով փորձված հիմքը պահպանելու մեր մշտական ձգտումն էր եւ մենք կարող ենք յայտնել մի շատ հիմնաւոր յոյս, որ արանից յետոյ եւս ոչինչ փոխված չի լինի: Յամառ կերպով տարածվող լուրերի տեղեւնիցան, որի նպատակն է խախտել վստահութիւնը դէպի երեքակտեսան դաշնակցութեան ամբողջութիւնը, այնքան թափանցիկ է, որ միան-

